

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐԿԱՅԻՆ
ԳԱՂՏՆԻՔ ՀԱՄԱՐՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) կողմից տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ հարկային գաղտնիք համարվող տեղեկությունները Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեին (այսուհետ՝ Արմստատ) տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Վիճակագրական տեղեկատվության ամբողջականացման և տեղեկատվության որակի ապահովման, դրանց մշակման, ամփոփման և ամփոփ տվյալների հրապարակման նպատակով ՊԵԿ-ը էլեկտրոնային եղանակով Արմստատին է տրամադրում հաշվետու տարվա ընթացքում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ տնտեսավարող սուբյեկտների (իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, նոտար) կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացված տնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ անվանական տեղեկատվությունը՝ տարեկան պարբերականությամբ (աճողական տարեսկզբից), ոչ ուշ, քան հաջորդող տարվա հունիսի 1-ը:

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված տեղեկատվությունը ներառում է՝

1) տնտեսավարող սուբյեկտի հարկ վճարողի հաշվառման համարը.

2) տնտեսավարող սուբյեկտի պետական ռեզիստրում գրանցման/հաշվառման համարը.

3) տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անունը, ազգանունը)։

4) տնտեսավարող սուբյեկտի կազմակերպական-իրավական ձևը։

5) տնտեսավարող սուբյեկտի գտնվելու (պետական գրանցման/հաշվառման) վայրի (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի դեպքում՝ բնակության վայրի) հասցեն. մարզը/Երևան քաղաքը, համայնքը, բնակավայրը/Երևան քաղաքի վարչական շրջանը՝ համաձայն «Վարչատարածքային բաժանման միավորների Հայաստանի դասակարգչի» ծածկագրման, փողոցը, շենքը, բնակարանը, փոստային դասիչը։

6) տնտեսավարող սուբյեկտի գործունեության իրականացման վայրի հասցեն (հասցեները), որտեղ գրանցված է (են) դրանց հսկիչ-դրամարկղային մեքենան (մեքենաները). մարզը/Երևան քաղաքը, համայնքը, բնակավայրը/Երևան քաղաքի վարչական շրջանը՝ համաձայն «Վարչատարածքային բաժանման միավորների Հայաստանի դասակարգչի» ծածկագրման, փողոցը, շենքը, բնակարանը, փոստային դասիչը։

7) տնտեսավարող սուբյեկտի տնօրենի և (կամ) առցանց լիազոր անձի հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն։

8) տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ ՊԵԿ-ի տվյալների շտեմարանի «Կարգավիճակը» դաշտում առկա գրառումը՝ գործող, լուծարված, ժամանակավոր դադարեցված, սնանկ և այլն։

9) տնտեսավարող սուբյեկտի հաշվետու ժամանակաշրջանի իրացման շրջանառությունը. ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի 16[Ա] և (կամ) շրջանառության հարկի հաշվարկի 17 և 22 տողերի տվյալները և (կամ) միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառությունը։

10) տնտեսավարող սուբյեկտի հաշվետու ժամանակաշրջանում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մասով հաշվարկված ակցիզային հարկի գումարը։

11) տնտեսավարող սուբյեկտի վարձու աշխատողների միջին տարեկան թվաքանակը.

12) տնտեսավարող սուբյեկտի տնտեսական գործունեության տեսակի (տեսակների) ծածկագրերը՝ համաձայն «Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի» 5-նիշ մակարդակի, և յուրաքանչյուր տնտեսական գործունեության տեսակի մասով իրացման շրջանառության տեսակարար կշիռը ընդամենը իրացման շրջանառության մեջ (%-ով).

13) տնտեսավարող սուբյեկտի ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ տեղեկատվությունը՝ հիմք ընդունելով տնտեսավարող սուբյեկտի կողմից ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացված հայտարարությունը.

14) ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի 23-րդ, 24.1-ին, 24.2-րդ, 24.8-րդ և 34-րդ կետերի տվյալները.

15) շրջանառության հարկի հաշվարկի բոլոր տողերի տվյալները.

16) հաշվետու տարվա շահութահարկի գումարը և շահութահարկի գումարը՝ հարկից նվազեցումները կատարելուց և արտոնությունները կիրառելուց հետո, մասնավորապես՝ շահութահարկի հաշվարկի 1-ին բաժնի 88-րդ և 102-րդ կետերի տվյալները, ինչպես նաև 8-րդ բաժնի 1-34-րդ կետերի 3-րդ և 6-րդ սյուների տվյալները.

17) բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի բոլոր տողերի տվյալները.

18) «միկրոձեռնարկատիրության սուբյեկտ» համարվելու մասին նշումը՝ հիմք ընդունելով տնտեսավարող սուբյեկտի կողմից ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացված հայտարարությունը:

4. Սույն կարգի 3-րդ կետում նշված տեղեկատվության ամբողջականության և որակին (դասակարգումներ, անհամապատասխանություններ, բացթողումներ և այլն) առնչվող հարցերի մասով Արմատատը երկամսյա ժամկետում տեղեկացնում է ՊԵԿ-ին՝ ՊԵԿ շտեմարանի տվյալների ճշգրտման և հետագայում դրանց բացառման նպատակով:

5. Սույն կարգի շրջանակում ՊԵԿ-ի կողմից Արմատատին տրամադրվող տեղեկատվությունը հանդիսանում է հարկային գաղտնիք, որը Արմատատի կողմից «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների համաձայն որակվում է որպես վիճակագրական գաղտնիք և կարող է օգտագործվել բացառապես վիճակագրական նպատակներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ